ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/25

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Սարգսյանի (լիազորագիր, տրված՝ 17.05.2019թ.)

Քննելով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 13.05.2019թ. ներկայացված և 14.05.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/25 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Մեգիէլ» ՍՊԸ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեգիէլ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 13.05.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով հայտերի բացման օրը եղել է 24.04.2019թ. ժամը 10:30-ին:

24.04.2019թ. մինչ սույն բողոքը ներկայացնելու օրը պատվիրատուի կողմից արձանագրությունը հասանելի չի դարձվել (հրապարակվել) ցանկացած անձի համար, ինչպես սահմանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքը:

30 ապրիլի 2019թ. դիմում է ներկայացվել պատվիրատուին՝ օրենքով սահմանված կարգով ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով ընթացակարգի արձանագրության եւ դրա մաս կազմող փաստաթղթերի պատճենները տրամադրելու մասին:

Բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ պատվիրատուն չի տրամադրել պահանջվող փաստաթղթերը կամ մերժել ներկայացված դիմում (դրսևորել է անգործություն):

Բողոքի փաստական եւ իրավական հիմքերը.

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, որի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի «գնումների եւ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացումը:»

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «Գնումների գործընթացը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.»:

Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշման 13-րդ կետի համաձայն՝ աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ հրավերով սահմանված ժամին:

Նույն որոշման 16-րդ կետի համաձայն՝ աճուրդն ամփոփվում է հրավերում նշված կոնկրետ ժամը լրանալու դրությամբ կամ սույն կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում:

Որոշման 19-րդ կետի համաձայն՝ աճուրդն ամփոփելուն հաջորդող աշխատանքային օրը

1) գնահատող հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցով ներկայացված գնային առաջարկներն աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ գերազանցում են ընթացակարգի արդյունքում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար գնման հայտով սահմանված գինը.

2) գնահատող հանձնաժողովի քարտուղարն աճուրդի արդյունքների ամփոփման նպատակով հրավիրված նիստի արձանագրության, ինչպես նաեւ տվյալ նիստին ներկա հանձնաժողովի անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում:

Սույն բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ gnumner.am տեղեկագրում առկա տեղեկության համաձայն ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով ընթացակարգի արդյունքերի ամփոփման նպատակով հրավիրված նիստի արձանագրությունը հրապարակված չէ տեղեկագրում:

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները մանրամասն կարգավորվում է ինչպես «Գնումների մասին» ՀՀ

օրենքով, այնպես էլ ՀՀ կառավարության 18.05.2017թ N 534-Ն որոշմամբ, և այդ իրավական ակտերով սահմանված ժամկետներն ինքնանպատակ չէ, դրանցով անշեղորեն առաջնորդվելը միտված է ապահովելու որպեսզի անհարկի չձգձգվի գնման գործընթացը եւ դրանց արդյունքների մասին իրազեկելը նույնպես չի կարող աննպատակ դիտարկվել, որը հիմք կտա կասկածի ենթարկել գնման ընթացակարգի իրավական ապահովումը:

Օրենքի իմպերատիվ պահանջ է հանդիսանում գնահատող հանձնաժողովի կողմից հրավիրվող նիստերի արդյունքներով արձանագրությունների կազմումը եւ տեղեկագրում հրապարակումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում»:

Մինչ սույն բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ պատվիրատուն չի հրապարակել ընթացակարգի արձանագրությունը:

30 ապրիլի 2019թ դիմում է ներկայացվել պատվիրատուին օրենքով սահմանված կարգով ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով ընթացակարգի արձանագրության և դրա մաս կազմող փստաթղթերի պատճենները տրամադրելու մասին (կից՝ դիմումի պատճեն եւ պատվիրատուի կողմից ստանալը հավաստող ապացույցը):

Պատվիրատուն չի տրամադրել կամ մերժել պահանջվող փաստաթղթերի պատճենները (դրսևորել է անգործություն):

Ընկերությունը հայտնել է, որ պատվիրատուի կողմից չի պահպանվել հայտերի գնահատման և արձանագրության հրապարակման համար սահմանված ժամկետները և ընթացակարգը:

Հրավերի 11-րդ գլուխը կարգավորում է գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը:

Համաձայն հրավերի 11.3 կետի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Ընկերությունը նշել է, որ թեև սույն բողոքի առարկան պատվիրատուի գործողություններն (անգործությունը) են, բայց այնուամենայնիվ հարկ է համարում անդրադառնալ հրավերին, մասնավորապես տեխնիկական բնութագրերին, փաստարկելով այն հանգամանքը, որ պատվիրատուի կողմից ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով ընթացակարգն իրականացվել է օրենքի կոպտագույն խախտումներով և դեռևս դրանք շարունակվում են:

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Ընկերությունը հայտնել է, որ ուսումնասիրելով ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով հրավերը տեխնիկական բնութագիրը չի կարող արձանագրել, որ պատվիրատուն ղեկավարվել է Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի իմպերատիվ պահանջով, քանի որ նրանում բացակայում է «կամ համարժեք» եզրույթը: Պատվիրատուի կողմից օրենքով չառաջնորդվելու արդյունքում խախտվել է ինչպես այլ հավանական հայտատուների, այդ թվում նաև՝ «Մեգիէլ» ՍՊ ընկերության ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

04 մայիսի 2017թ 526-Ն կառավարության որոշման 22-րդ կետը սահմանում է, որ «Գնման առարկայի բնութագրերը եւ մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի»:

Օրենքով սահմանված կարգավորմաբ չկազմված հրավերով կայացված ընթացակարգը չի կարող ապահովել օրինական արդյունք, քանի որ ի սկզբանե կարծես թե

պատվիրատուն միտում է ունեցել քողարկված ձևով սահմանափակել շատ այլ մասնակիցների հայտ ներկայացնելու հնարավորությունը, այդպիսով՝ հնարավորություն ստեղծել նախընտրելի մասնակցի հաղթանակը:

Պատվիրատուի նմանօրինակ միտումը հիմնավորվում է նրանով, որ մինչ այժմ պատվիրատուն չի հրապարակել 24.04.2019թ. ընթացակարգի արձանագրությունը և այն Ընկերության դիմում-պահանջի հիման վրա ևս չի տրամադրվել:

Ընկերությունը հայտնել է, որ պատվիրատուի բազմաթիվ օրենսդրորեն ամրագրված կարգավորումների շրջանցումները չի կարող դիտարկվել ուղակի վրիպումներ կամ անհետևողական վերաբերմունք: Նման վերաբերմունքը պետական միջոցներից ֆինանսավորվող գործընթացին շատ ավելի ռիսկային նախադրյալներ են պարունակում:

Իրավական նորմերի խախտմամբ իրականացվող գնման ընթացակարգը չի կարող ապահովել օրինական եզրափակում, որը նախատեսել է օրենսդիրը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և դրանց իրականացվան համար ընդունված իրավական այլ ակտերով (ՀՀ կառավարության որոշումներ):

Ընկերությունը ներկայացված բողոքով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է արգելել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրի հրավերով կատարել որոշակի գործողություններ, ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր և պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով գնման ընթացակարգը:

Ընկերությունը ի լրումն ներկայացված բողոքի 08.06.2019թ. գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուն ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգն իրականացրել է գնման պլանի բացակայության պայմաններում, որը պետք է հրապարակեր gnumner.am կայքում՝ մինչև ընթացակարգով մրցույթ հայտարարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

«Մեգիէլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.05.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.05.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուի կողմից «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:
2. Ընթացակարգի հրավերի համաձայն՝ հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով ապրիլի 24-ին ժամը 10:30-ին:
3. www.gnumner.am տեղեկագրում առկա տեղեկատվության համաձայն՝ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հրավիրված նիստի արձանագրությունը հրապարակված չէ տեղեկագրում:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 13.05.2019թ. ներկայացված բողոքը և ի լրումն բողոքի 08.06.2019թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ***գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա***.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, ***թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում***.

Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝***

1) ***հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում.***

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ ***հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում:*** Գնահատող հանձնաժողովի այն

անդամները, ովքեր հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն ենթակետում նախատեսված հայտարարությունները, որոնք տեղեկագրում քարտուղարը հրապարակում է ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրը.

Պատվիրատուի կողմից «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ ***հայտերի բացումը*** տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով ***ապրիլի 24-ին ժամը 10:30-ին***:

Այսպիսով արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ www.gnumner.am տեղեկագրում առկա տեղեկատվության համաձայն՝ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հրավիրված նիստի արձանագրությունը հրապարակված չէ տեղեկագրում:

Արձանագրում եմ նաև, որ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26» ծածկագրով ընթացակարգի հրավերից բացի, որևէ այլ փաստաթուղթ Ընթացակարգի շրջանակներում www.gnumner.am կայքում հրապարակված չէ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի պահանջներին համապատասխան՝ ***բողոք ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը դիմում է պատվիրատուին՝ տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելու պահանջով: Սույն կետում նշված փաստաթղթերը պատվիրատուն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնում է նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:***

Այսպիսով սույն բողոքի շրջանակներում վերը նշված հոդվածի պահանջի համաձայն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 15.05.2019թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/8030-2019 գրությամբ դիմել է պատվիրատուին՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ին,

ներկայացնելով պահանջ տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրելու վերաբերյալ, սակայն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ որևէ դիրքորոշում և փաստաթուղթ չի ներկայացվել:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:

Գնման գործընթացը՝ հատկապես գնման գործընթացի կազմակերպումը և պայմանագրի կնքումը ենթադրում են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան գործողությունների ամբողջություն, որոնց համար սահմանված են հստակ ժամկետներ:

Ընդ որում՝ համապատասխան գնման գործընթացի կազմակերպման ամբողջ գործընթացի համար ժամկետային սահմանափակումներ նախատեսելն աննպատակ չէ և ուղղված է գնման գործընթացի չհիմնավորված ձգձգումներից, կամայականություններից խուսափելուն և գնման գործընթացն արդյունավետ և ժամանակին իրականացնելուն:

Ուսումնասիրելով Ընթացակարգի իրականացման ընթացքն, արձանագրում եմ, որ վերջինիս շրջանակներում թույլ են տրվել մի շարք ընթացակարգային նորմերի խախտումներ.

մասնավորապես Կարգը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում, ինչպես նաև իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում:

Գնահատող հանձնաժողովի այն անդամները, ովքեր հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն ենթակետում նախատեսված հայտարարությունները, որոնք տեղեկագրում քարտուղարը հրապարակում է ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրը.

Դրա հետ մեկտեղ Կարգը նախատեսում է նաև այն գործողությունները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից ենթակա են կատարման հայտերի բացման նիստն ամփոփվելուց հետո և կրկին սահմանված են հստակ ժամկետներ, որոնք վերաբերում են թե մասնակիցների հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրելուն և թե ընտրված մասնակից ճանաչելուն, իսկ այնուհետև նաև Օրենքով նախատեսված պայմանագրի կնքման անգործության ժամկետ սահմանելուն:

Ընդ որում՝ Օրենքի իմպերատիվ պահանջ է հանդիսանում գնահատող հանձնաժողովի կողմից հրավիրվող նիստերի արդյունքներով արձանագրությունների կազմումը և տեղեկագրում հրապարակումը:

Արձանագրում եմ, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում www.gnumner.am տեղեկագրում մինչ սույն բողոքով որոշում կայացնելը հրապարակված չէ գնահատող հանձնաժողովի որոշումների վերաբերյալ որևէ տեղեկատվություն, այդ թվում նաև՝ հրապարակման ենթակա այլ տեղեկատվություն:

Վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով Ընթացակարգի տեխնիկական բնութագրի վիճարկմանը, ապա արձանագրում եմ, որ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Այսպիսով «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26» ծածկագրով գնանշման հարցման հրավերի համաձայն՝ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 24.04.2019թ. ժամը 10:30-ը: Հետևաբար սույն բասով բողոքը չի կարող քննության առարկա դարձվել:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի բողոքով ներկայացված հետևյալ պահանջին, այն է՝ արգելել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ին ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով հրավերով կատարել որոշակի գործողություններ, ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր, ապա գտնում եմ, որ բողոքի նման պահանջն ենթակա է մերժման, քանի որ Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Ինչ վերաբերում է «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված այն պնդմանը, որ Պատվիրատուն «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգն իրականացրել է գնման պլանի բացակայության պայմաններում, որը պետք է հրապարակեր gnumner.am կայքում՝ մինչև ընթացակարգով մրցույթ հայտարարելը, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը.

Կարգի 16-րդ, 17-րդ և 18-րդ կետերի համաձայն՝

16. ***Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:*** Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

17. ***Գնման գործընթացի կազմակերպման <u>իրավական հիմքը</u> սահմանված պահանջներին համապատասխան հաստատված***, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև ***<u>հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:</u>***

18. Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում

համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***գնումների պլանը***, ներառյալ՝ փոփոխությունները, ***հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Օրենքի 2-րդ հոդվածի 14-րդ կետով սահմանվում է, որ ***տեղեկագիրը սույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք***:

Վերը նշված իրավական կարգավորումների համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է, որը օրենքով սահմանված կարգով Պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում, մինչդեռ արձանագրում եմ, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է գնման գործընթաց առանց իրավական հիմքի, այն է՝ առկա չէ սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված գնումների պլան:

Վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ բողոքը սույն մասով ևս հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոնշվածից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 13.05.2019թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**